

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ  
ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ հայրենակիցներ

Ջերմորեն ու հպարտորեն շնորհավորում եմ բոլորիս՝ Անկախության տոնի կապակցությամբ:

Այսօրվա մեր՝ այնքան փափագած Հայաստանի Հանրապետությունն իր անկախությունը հռչակեց 27 տարի առաջ, բայց հետո դրան պետք է հաջորդեին համազգային պայքարի, հայոց աննկուն ոգու եւ արիության քննության տարիները, որոնց արդյունքում էլ մեր հաղթանակներով ամրագրեցինք անկախ երկիր ունենալու իրավունքը:

Սեպտեմբերի 21-ը տոն է՝ հանդիսավոր ու բերկրությամբ լի, բայց ամեն տարի մեր պետականության վերածննդի օրը նշելիս՝ պարտավոր ենք հիշել ու մեր հարգանքն ու խոնարհումը հավաստել նրանց հանդեպ, ովքեր եղան 1988-ին սկիզբ առած Ազգային զարթոնքի ակունքներում, նրանց, ովքեր լծվեցին նորանկախ պետության բանակաշինության գործին, նրանց, ում շնորհիվ անսասան մնացին մեր սահմաններն ու հավերժ փառք տալ նրանց անմահ անուններին, ովքեր այսօր մեզ հետ չեն...

Միրելի՛ սյունեցիներ,

դարերով պետականություն երազած մեր ազգի համար անգնահատելի է այս տոնի խորհուրդը, ուստի յուրաքանչյուրս ձգտենք մեր աշխատանքով, մեր բարի արարմունքով ու ջանքով մի նոր քար դնել Հայաստան ազատ երկրի շինարարության համար, ներդնել մեր եռանդը հաջորդ սերնդին առավել շեն, տնտեսապես հզոր ու կայուն հայրենիք ժառանգելու համար:

Սեպտեմբերի 21-ի առիթով մեր հանրապետությանը մաղթում եմ  
հաստատուն խաղաղություն, ամուր սահմաններ, դրանք հսկող  
զինվորներին՝ անփորձանք ծառայություն, բոլորիդ օջախներին՝  
բարօրություն:

Միրե՛նք, նվիրվե՛նք մեր պետությանը, մարզին, համայնքին, գնահատե՛նք  
ու փայփայե՛նք անկախությունը, գիտակցենք, որ ամենքս անելիք ունենք  
այն ամրացնելու գործում:

Շնորհավո՛ր Սեպտեմբերի 21:

**21.09.2018թ.**